

Համո Կ. Սուքիասյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՎԱՌԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ 1921 ԹՎԱԿԱՆԻՆ

Զանգեզուրում Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջպետական սահմանի ձևավորման պատմությունից*

Բանալի բառեր – Խորհրդային Հայաստան, Խորհրդային Ադրբեջան, Զանգեզուր, Գարեգին Նժդեհ, տարածք, գավառ, սահման, սահմանագիծ, համաձայնագիր, վեճ, խորհրդայնացում:

Երբ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան սահմաններից Քարվանսարա մտած Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն տեղի չունեցած «բանվորների և գյուղացիների ապստամբության» անունից երկիրը հայտարարեց «Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն»¹, մեկ օր անց՝ նոյեմբերի 30-ին, Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ԱՄԽՀ) հեղափոխական կոմիտեն հայտարարեց հոգուտ Խորհրդային Հայաստանի Նախիջևանից, Զանգեզուրից և Լեռնային Ղարաբաղից հրաժարվելու մասին²:

Դեկտեմբերի 2-ին ՀՀ կառավարության ներկայացուցիչների և ՀՀ-ում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի միջև Երևանում ստորագրված համաձայնագրի համաձայն՝ Հայաստանը հռչակվեց «անկախ սոցիալիստական հանրապետություն»: Համաձայնագրի երրորդ հոդվածի համաձայն, ի շարս այլ տարածքների, Խորհրդային Հայաստանի մաս էր ճանաչվում նաև Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը³:

Հայ պատմագիտության կողմից հաստատված է, որ Զանգեզուրի գավառի (7673,4 քառ. կմ) մեջ մտնում էին ներկայիս ՀՀ Սյունիքի մարզը և ԼՂՀ ամբողջ

*Հոդվածն ընդունվել է տպագրության 12.12.2014:

1 «ՀՄԽՀ ղեկրետների և հրամանների ժողովածու», պրակ II, էջմիածին, 1921, էջ 1-5:

2 Տե՛ս «Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов и материалов», отв. ред. В. А. Микаелян, Ереван, 1992, с. 602.

3 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու», խմբագրությամբ՝ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազվախչյանի, Եր., 2000, էջ 383-384:

Քաշաթաղի շրջանը, Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանը, նաև Մեծ Քիրս լեռան հարավարևմտյան ստորոտին ընկած, այսպես կոչված, «Ղուգեյի գյուղերը»՝ Հադրութի շրջանում⁴: Թեև Երևանի համաձայնագրի երրորդ հոդվածը կյանքում չիրագործվեց, այդուհանդերձ այս դեպքում կարևոր է այն իրողությունը, որ Խորհրդային Ռուսաստանը Խորհրդային Հայաստանի մաս էր ճանաչում **Զանգեզուրի ողջ գավառը** և այդ ճանաչումն ամրագրվում էր Հայաստանի խորհրդայնացման հիմքը դարձած համաձայնագրում:

Սակայն դրանից հետո էլ ադրբեջանա-ռուսական գորքերի դեմ կենաց և մահու կռիվ մղող Սյունիքի պաշտպանները չհավատացին Զանգեզուրը Հայաստանի մաս հանդիսանալու խոստմանը: «Ազատ Սյունիք» հոդվածաշարում ինքը՝ Գարեգին Նժդեհը, Ադրբեջանի հեղկոմի հայտարարությունը հայությանը «խաբեպատիր խոստումներով կաշառելու»⁵ գործողություն էր համարում: Ավելին՝ արդեն 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում տեղի ունեցած համագանգեզուրյան առաջին համագումարը որոշեց «Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգ, մնալով անկախ, մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ»⁶: Այստեղ «մայր երկրի» տակ հասկացվում էր Հայաստանի Հանրապետությունը, այլ ոչ թե Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ՀՍԽՀ):

Խորհրդային Հայաստանի իշխանությունները 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին Զանգեզուրի վրա իրենց վերահսկողությունը տարածելու հնարավորություն չունեին, ուստի բավարարվում էին միայն «դեկլարացիաներով»: 1921 թ. հունվարի 29-ին «Զանգեզուրի գյուղացիությանը» ուղղված դիմումում Հայաստանի հեղկոմը տեղեկացնում էր Ադրբեջանի հեղկոմի հռչակագրի մասին, հայտարարում, որ խորհրդային իշխանության համար առաջնային խնդիր է Զանգեզուրը ՀՍԽՀ-ին միացնելը և առաջարկում էր վերջ տալ «աննպատակ դիմադրությանը և ճանաչել Հայաստանի խորհրդային իշխանությունը»⁷:

Հավատ չընծայելով նաև այս հայտարարությանը՝ 1921թ. ապրիլի 26-ին կրկին Տաթևի վանքում տեղի ունեցած Զանգեզուրի հայության երկրորդ համագումարում ինքնավար Սյունիքը վերանվանվեց Լեռնահայաստան, ստեղծվեց կառավարություն՝ Գ. Նժդեհի գլխավորությամբ: Լեռնահայաստանի հռչակումը ու ևս 3-4 ամսով «Ազատ Լեռնահայաստանի գոյության» անհրաժեշտությունը Գ. Նժդեհը բացատրում է հետևյալով. որոշակի ժամանակ էր պետք 1921 թ. Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Զանգեզուր նահանջած երևանյան գաղթականներին, մտավորականներին ու զինվորներին Իրան անցնելու համար⁸: Մինչդեռ իրականում նա հույս ուներ արտաքին նպաստավոր իրավիճակի դեպքում Հայաստանից հեռացնել բոլշևիկներին:

Անարդյունք ավարտվեցին նաև 1921 թ. մայիսի 12-15-ին Սիսիանի Ղալաջուղ գյուղում ՀՍԽՀ և Լեռնահայաստանի պատվիրակությունների միջև տեղի ունեցած բանակցությունները: Իսկ արդեն հունիսի 1-ին Լեռնահայաստանը վերանվանվեց Հայաստան, ինչն ավելի զայրացրեց խորհրդային կողմին: Խաղաղ ձանապարհով Զանգեզուրը խորհրդայնացնելու փորձերի ձախողումից հետո ՌԿ(Բ) Կ կենտկոմի կովկասյան բյուրոն 1921թ. հունիսի 3-ին որոշեց հունիսի վերջին ռազմական ճանապարհով լուծել «հակահեղափոխական Զանգեզուրի» խնդիրը⁹:

4 Տե՛ս **Խաչատրյան Կ., Բաղայան Գ., ՀՍԽՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թ. դեկտեմբեր - 1922 թ. սկիզբ)**, «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», N 14, Եր., 2013, էջ 177:

5 **Նժդեհ Գ.**, Ազատ Սյունիք, «Երկեր: Երկու հատորով», հատ. 2, Եր., 2002, էջ 115:

6 **Գեորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Եր., 1991, էջ 126:

7 ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 169, թ. 1:

8 Տե՛ս **Նժդեհ Գ.**, Ինչու պայքարեց Լեռնահայաստանը, «Երկեր: Երկու հատորով», հատ. 2, էջ 12: Տե՛ս նաև՝ նույնի, Ազատ Սյունիք, «Երկեր: Երկու հատորով», հատ. 2, էջ 150:

9 ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1187, թ. 13:

Որոշման կենսագործումից առաջ՝ հունիսի 13-ին, ՀՄԽՀ ժողովմխորհը նամակ-հայտարարությունով դիմեց Լեռնահայաստանի իշխանություններին: Հայտարարության համաձայն՝ երկրամասը կազմելու էր Խորհրդային Հայաստանի մասը, ներում էր շնորհվելու խորհրդային իշխանությունների դեմ պայքարած գործիչներին և այլն¹⁰: Սակայն, ինչպես Ղալաջուղի բանակցությունների ժամանակ, այնպես էլ այս հայտարարության մեջ չէր նշվում, թե Զանգեզուրն ինչպիսի սահմաններով պետք է անցներ ՀՄԽՀ-ին: Ուստի «Զանգեզուր» հասկացության տակ պետք էր հասկանալ ողջ գավառը, մանավանդ որ այդպես էր նշվում Ադրբեջանի հեղկոմի հայտարարությունում և Երևանի հայ-ռուսական համաձայնագրի մեջ:

Եվ միայն 1921 թ. հունիսի 26-ին վերագրավելով նախօրեին Յապոնի կողմից ռազմակալված Դարալագյազը՝ ՀՄԽՀ Կարմիր բանակը շարունակեց ռազմական գործողությունները՝ խնդիր դնելով պարտության մատնել Զանգեզուրում կենտրոնացած «հակահեղափոխական ուժերին» և երկրամասը միացնել Խորհրդային Հայաստանին: Խորհրդային գերակշիռ ուժերի առաջխաղացման հետևանքով Զանգեզուրը շատ արագ խորհրդայնացվեց. հուլիսի 9-ին Գ. Նժդեհը մի խումբ զինակիցներով անցավ Արաքս գետի պարսկական ափը, իսկ հուլիսի 13-ին խորհրդային ուժերը գրավեցին Մեղրի գյուղն ու Գենվազի շրջանը¹¹: Զանգեզուրի ինքնապաշտպանությունն ունեցավ այն արդյունքը, որ երկրամասի հայությունը փրկվեց ադրբեջանական ջարդերից, իսկ գավառի **արևմտյան հատվածը** միացավ Խորհրդային Հայաստանին:

Ուստի պատահական չէ, որ Գ. Նժդեհի հետագայում գրած աշխատություններում կարմիր թելի նման անցնում է այն միտքը, որ իր և զինակիցների վերջնական նպատակը Սյունիքը Մայր Հայաստանի կազմում պահելն էր: Եվ այդ պայքարի հետևանքով կանխվեց երկրամասն Ադրբեջանին կցելու հեռանկարը, իսկ վերջնարդյունքում այն միացավ Խորհրդային Հայաստանին¹²: Սակայն ողջ խնդիրն այն է, որ նման պնդումը միանշանակ չէ, քանի որ **ՀՄԽՀ-ին էր անցել միայն Զանգեզուրի արևմտյան մասը**:

Կարծում ենք՝ չնայած Ադրբեջանի հեղկոմի հայտարարության և Երևանի համաձայնագրի առկայությանը, Զանգեզուրի խորհրդայնացմանը հաջորդող օրերին ՀՄԽՀ իշխանությունների համար նույնպես դեռևս հստակ չէր, թե նախկին Ռուսաստանյան կայսրության Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի ռը մասերը պետք է ընդգրկվեն ՀՄԽՀ կազմում: Ասվածի վկայությունն է այն իրողությունը, որ ողջ Զանգեզուրում խորհրդային կարգեր հաստատելուց (1921 թ. հուլիսի 13) մեկ շաբաթ անց՝ հուլիսի 20-ին, ՀՄԽՀ ժողովմխորհի հրատարակած «ՀՄԽՀ վարչական վերաբաժանումների մասին» դեկրետում շրջանցվեց Զանգեզուրի վերաբաժանման հարցը: Դեկրետի համաձայն՝ ՀՄԽՀ-ն բաժանվեց 8 գավառի, այդ թվում՝ Դարալագյազի գավառը՝ Քեշիշքենդի և Գնդևազի գավառակներով¹³:

Այստեղ հետաքրքրական է այն հանգամանքը, որ Զանգեզուրի հետ գրեթե միաժամանակ (1921 թ. հունիսի 26-ին) խորհրդայնացված Դարալագյազը ենթարկվեց վարչական վերաբաժանման, իսկ Զանգեզուրը՝ ոչ: Հավանաբար ՀՄԽՀ իշխանություններին ժամանակ էր անհրաժեշտ նոր խորհրդայնացված Զանգեզուրի վարչական բաժանման հարցում կողմնորոշվելու համար: Կամ էլ ՀՄԽՀ ղեկավարությունը սպասում էր Հայաստանի և Ադրբեջանի միջև նախկին Զանգեզուրի գավառի վերաբաժանման վերաբերյալ Մոսկվայի վերջնական ցուցումին ու միայն դրանից հետո կհայտարարեր ՀՄԽՀ-ին միացված տարածքների մասին:

10 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 19 հունիսի 1921, N 106:

11 Տե՛ս **Սողոմոնյան Ա. Գ.**, Քաղաքացիական կռիվները Զանգեզուրում, Եր., 1958, էջ 116-117: **Սիմոնյան Ա. Հ.**, Զանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.), Եր., 2000, էջ 601-602:

12 Տե՛ս **Սուքիասյան Հ. Կ.**, Սյունիքը Հայաստանի կազմում պահպանելու խնդիրը Գարեգին Նժդեհի աշխատություններում, «Լրաբեր հաս. գիտ.», Եր., 2012, N 2-3, էջ 141-148:

13 Տե՛ս «ՀՄԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ II, Էջմիածին, 1921, էջ 83-84:

էր զանազան թյուրիմացությունների առիթ դառնալ: Ուստի առաջնային խնդիր էր ժամանակավոր սահմանագծի հաստատումը: Մանավանդ որ անհրաժեշտ էր նաև պատրաստվել տեղական խորհուրդների ընտրություններին: Այս հարցի կարգավորումը հանձնարարվեց Զանգեզուրում ՀՄԽՀ արտակարգ լիազոր Դրաստամատ Տեր-Սիմոնյանին:

Որքան էլ զարմանալի թվա, նախկին Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի տարածքում ՀՄԽՀ-ի և ԱՄԽՀ-ի միջև ժամանակավոր սահմանագծի որոշումը վերապահվեց ոչ թե միջպետական հանձնաժողովին, այլ Զանգեզուրի և Ղուբաթլուի կոմունիստներին, ինչը վկայում էր Ադրբեջանի կողմից իրականացվող անեքսիան բողարկելու ցանկության մասին:



1921 թ. հոկտեմբերի 12-13-ին 43 անձի մասնակցությամբ տեղի ունեցավ ՀՄԽՀ Զանգեզուրի և ԱՄԽՀ Ղուբաթլուի գավառների «պատասխանատու գործիչների» խորհրդակցությունը, որի գլխավոր դերակատարներն էին Դ. Տեր-Սիմոնյանը, Ղուբաթլուի գավառային գործադիր կոմիտեի նախագահ Գուսի Հաջիևը, ԱԿ(Բ)Կ Ղուբաթլուի գավկոմի քարտուղար Աբաս Սուլթանովը, Ազիզ Մուսաևը, Զանգեզուրի գավառային հեղկոմի նախագահ Գրիգոր Օհանջանյանը, Զանգեզուրի գավիեղկոմի անդամ-քարտուղար Գևորգ Սաֆրազբեկյանը, ՀԿ(Բ)Կ Զանգեզուրի գավկոմի քարտուղար Մնացական Թավաքայանը, Զանգեզուրի գավիեղկոմի նախագահի տեղակալ Աշոտ Շախմուրադյանը: Հենց վերջինն էլ զեկուցեց «Ժամանակավոր սահմանների հարցը» թեմայով՝ շեշտելով, որ երկու շրջանների միջև ժամանակավոր վարչական սահմանների բացակայությունը խոչընդոտում է արդյունավետ աշխատանքներին: «Ամբողջ գյուղեր չեն տեսնում խորհրդային իշխանությունը, այսինքն՝ չգիտեն վարչական տեսակետից ենթարկվում են Ղուբաթլուին, թե՛ Զանգեզուրին: Սահմանային շերտը, որտեղ իշխանություն չի հաստատվել, տարբեր բանդաների համար հավաքատեղի է հանդիսանում: Անհրաժեշտ է ժամանակավոր սահմաններ հաստատել»¹⁸, - նշեց զեկուցողը:

18 ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 50, թ. 22 շրջ., ֆ. 146, ց. 1, գ. 48, թ. 13 շրջ.:

Նման տարօրինակ ու անհասկանալի ձևակերպումով մոռացության էր տրվում Ղուբաթլուի հիմնական մասի՝ Զանգեզուրի գավառի մասը լինելու իրողությունը: Կարծիքների փոխանակությունից հետո խորհրդակցության կայացրած որոշումը մեջբերում ենք ամբողջությամբ. «Ընտրել հանձնաժողով՝ պարզելու համար, թե որ գյուղերում են գյուղխորհուրդներ եղել, որոնց ներկայացուցիչները մայիսի 1-ին մասնակցել են համաաղբբեջանական խորհուրդների առաջին համագումարին, այդտեղ պետք է տարածվի Ղուբաթլուի գործադիր կոմիտեի իշխանությունը, իսկ Զանգեզուրի հեղկոմի տարածք համարել այն, որը 1921 թ. հուլիսին մաքրվել է Նժդեհի բանդաներից: Հանձնաժողովի մեջ մտնում են Զանգեզուրի և Ղուբաթլուի հողային բաժինների և ներքին գործերի բաժինների վարիչները»¹⁹:

Հարկ է նշել, որ նշված խորհրդակցության գումարումից մեկ օր առաջ՝ հոկտեմբերի 11-ին, հավանաբար Գորիսում «Ղուբաթլուի և Զանգեզուրի գավառների ադմինիստրատիվ ժամանակավոր սահմանները որոշելու. տապալված կառավարության սահմանները վերականգնացնելու հուլիսի 2-ի տվյալներով» հարցով 3 զանգեզուրցի գործիչների՝ գավիեղկոմի նախագահի տեղակալ Աշոտ Շախմուրադյանի, Հողային բաժանմունքի վարիչ Համբարձում Տեր-Հովհաննիսյանի և բաժանմունքի գործերի կառավարիչ (1921 թ. հուլիսի 9-ից մինչև սեպտեմբերի 6-ը բաժանմունքի վարիչն էր) Հովհաննես Ղուկասյանի մասնակցությամբ հատուկ նիստ է գումարվում: Չափազանց հետաքրքիր օրակարգով այդ նիստն ընդունում է հետևյալ որոշումները (մեջբերում ենք ամբողջությամբ).

«1. Դարալագեազի գաւառի ամբողջ սահմանագիծը ըստ հին վարչական սահմանագծի պահպանել Զանգեզուրի սահմանների մէջ:

2. Հիւսիսային սահմանը սկսում է՝ Դաւազեռոզ լեռան գագաթից դեպի արևելք Ջիվանշիրի գաւառի հին վարչական սահմանագծով մինչև Իւջբուլաղ լեռան գագաթը, այնտեղից դեպի հարավ-արևելք անցնելով Ֆիրին-չինգիլ լեռան գագաթը մինչև Դըլլըռոզ լեռնագագաթը, այնտեղից ուղիղ արևելք՝ մինչև Օլոուլար լեռան գագաթը, այնտեղից իջնելով հարավ-արևելք ուղղությամբ Իշըխլու և Քաչալ դաղ լեռնագագաթները՝ Ջիննի-գեօլը թողնելով թուրք քուլոբների իրաւասութեան տակ, Քաչալ դաղից սահմանագիծը տանել հետևեալ գիւղական հասարակութիւնների հողերի սահմաններով. Բայանդուր, Խոզնաւար, Քոսալար (Ջարուղը և Նալուուզուն թողնել Քուրդիստանի տերիտորիայի մէջ, սահմանագիծը անցնում է Հագարու գետի աջ ափով մինչև Կոռնիձոր գիւղը), Կոռնիձոր, Մազնազակ լեռան գագաթը, Ալիդուլիուշաղի, Գօարջիկ, Մամեղլու (Մամեղլու գիւղը իր հողամասերով թողնում է Ղուբաթլուի սահմաններում), Ջիրիկլու, Ջեյվայ, Ջոր, Այաղի, Գոյեալ, Եղուարդ (Սիրքաթասը մնում է Զանգեզուրի սահմաններում), Հագարագ, Գագալու (Ղարաբաբան մնում է Ղուբաթլուի սահմաններում), **Շահֆլու, Ղարագոլ (Ռագիդարան մնում է Ղուբաթլուի սահմաններում)**²⁰, Հանդ, սահմանագիծը Հանդից իջնում է վերջինիս հասարակութեան հողերի սահմանագծով հետևեալ լեռնագագաթներով. Շուքուրաթագ, Բարթագ, Սագիրտ, Աղբանդ՝ մինչև Երասխ գետը: Պարսկաստանի սահմանը սկսւում է Աղբանդ գագաթից Երասխ գետի հոսանքով՝ մինչև Նախիջևանի հին սահմանը: Նախիջևանի սահմանագիծը մնում է հին սահմանների մէջ»²¹: Փաստացի հենց այս սահմանագծման հիման վրա էլ տեղի ունեցավ Զանգեզուրի գավառում ՀՄԽՀ-ի և ԱՄԽՀ-ի ժամանակավոր սահմանաբաժանումը:

Այսպիսով, գիտական շրջանառության մեջ դրվող նոր փաստաթղթերի օգտագործմամբ կատարված ներկա քննությունը հնարավորություն է տալիս փաստելու այն ճշմարտությունը, որ Գարեգին Նժդեհի գլխավորած Զանգեզուրի

19 Նույն տեղում:
20 Ազգացված տեքստն առկա է միայն ՀԱԱ, ֆ. 132, ց. 1, գ. 299, թ. 9 և շրջ.-ում:
21 ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 50, թ. 19 և շրջ., ֆ. 132, ց. 1, գ. 299, թ. 9 և շրջ.:

գոյամարտի արդյունքում է, որ Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի արևմտյան մասը միացավ Խորհրդային Հայաստանին: Բացառված չէ, որ եթե մինչև 1921 թ. մայիս-հուլիսը (ադրբեջանական տեղական խորհուրդների ընտրությունների և Զանգեզուրի խորհրդայնացման շրջանը) Զանգեզուրի գավառից առավել քիչ տարածքներ գտնվեին 1921 թ. հունիսի 1-ին «Հայաստան» վերանվանված Լեռնահայաստանի կազմում, ապա ավելի սեղմ կլիներ նաև Խորհրդային Հայաստանի տարածքը:

Այս ամենով հանդերձ՝ պետք է փաստել, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրի համաձայն Խորհրդային Հայաստանի մաս հանդիսացող Զանգեզուրի գավառը քողարկված կերպով, առանց որևէ իրավական հիմքի կամ նրա ձևավորմանն ուղղված ընթացակարգի, բաժանվել է ՀՍԽՀ-ի և ԱՍԽՀ-ի միջև: Մերօրյա իրողությունների հետ զուգահեռներ անցկացնելու պարագայում կարող ենք եզրակացնել, որ առավել նպատակահարմար կլիներ հայկական զինուժի կողմից 1992-1993 թթ. Ադրբեջանից ազատագրված նախկին ցարական Ռուսաստանի Զանգեզուրի գավառի մաս հանդիսացած և Հայաստանի Հանրապետության ու Խորհրդային Ռուսաստանի միջև 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով Խորհրդային Հայաստանին փոխանցված տարածքները միացնել Հայաստանի, այլ ոչ թե Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը: Նպատակահարմար կլինի նաև նշված տարածքների դե-յուրե Հայաստանի Հանրապետությանը պատկանելության հարցն առաջիկայում առանձին բանակցությունների առարկա դարձնել²²:

Summary

DIVISION OF THE PROVINCE (GAVAR) ZANGEZUR IN 1921

From the history of the formation of the interstate border between Soviet Armenia and Soviet Azerbaijan

Hamo K. Sukiasyan

On the basis of the Armenian-Russian agreement signed on December 2, 1920 in Yerevan, Soviet Russia recognized the province of Zangezur of Yelizavetpol province as part of Soviet Armenia. Previously, on November 30, 1920 the Revolutionary Committee of Azerbaijan also declared Zangezur property of Soviet Armenia.

On August 31, 1921 People's Commissars of ASSR took the decision „about the formation of the province of Zangezur“, which meant only the territory under the guidance of Njdeh (western part of the province). Thus, although the leaders of the ASSR were pretending that Zangezur joined the Soviet Armenia, it concerned only the western part of the province.

On October 12-13, 1921 at the meeting with the participation of 43 „responsible figures“ from Armenia and Azerbaijan, it was decided to hold a temporary border between the two states. Accordingly, the territories where in April 1921 they held the elections for local councils, were considered part of the territory of Azerbaijan, and those areas which were under the rule of G. Nzhdeh until July 1921 were attached to Armenia. A similar decision was taken just

²² Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ ԳԴԿ 13-6A405 ծածկագրով թեմայի շրջանակներում:

